# Ցույց տուր և ասա

Ես սիրում եմ տեսնել տաճարը:

**Ռեբեկկա Ս., 9 տարեկան, Արագուա, Վենեսուելա**






Մի անգամ, երբ նստեցինք մեքենան, շարժիչը չէր միանում: Մենք ստուգեցինք շարժիչը, սակայն ոչինչ չգտանք: Ես զգացի, որ պետք է աղոթեի: Մի քանի րոպե անց շարժիչն աշխատեց: Ես այնքան ուրախ եմ, որ Երկնային Հայրը միշտ կարող է օգնել ինձ:

**Բրուկլին Բ., 9 տարեկան, Քուելցալթենանգո, Գվատեմալա**



Երկու տարի առաջ մի նոր տղա եկավ մեր դասարան: Նա բարի չէր մյուսների հանդեպ: Բոլորը սկսեցին չսիրել և չարությամբ վերաբերվել նրան: Դա նրան տխրեցրեց, իսկ ես մյուսների նման չվարվեցի: Իմ ընկերներից մի քանիսը հետևեցին իմ օրինակին: Ես հավատում եմ, որ եթե վարվեմ այնպես, ինչպես Աստված է ցանկանում, ես ավելի երջանիկ ու ապահով կլինեմ: Ես հավատում եմ, որ եթե ես քաջություն ունենամ ու անկեղծ լինեմ, ապա կգտնեմ ընկերներ, որոնք ինձ կընդունեն այնպիսին, ինչպիսին ես կամ:

**Վեստինա Կ., 11 տարեկան, Վիլնյուս, Լիտվա**



Ես սիրում եմ ֆուտբոլ խաղալ փոքրերի հետ և ուսուցանել նրանց նոր հմտություններ: Սիրում եմ ծառայել այդ եղանակով:

**Սաշա Կ., 11 տարեկան, Մոսկվա, ՌԴ**